

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ԴԱԼԱՏՈՒՄ ԱՎԱՐՏՎԵՑ ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆԸ

11.02.2017 18:18



Հաշվիչ հանձնաժողովի նախագահը հայտարարել է քվեարկության ավարտի մասին:

Հաշվիչ հանձնաժողովը քվեարկության սենյակում գտնվող ընտրողներին քվեարկելու հնարավորություն է տրվել, որից հետո Հաշվիչ հանձնաժողովի նախագահը փակել է քվեատուփերի ճեղքերը: Հաշվիչ հանձնաժողովի նիստում ամփոփվելու են քվեարկության արդյունքները:

Գաղտնի քվեարկության արդյունքների ամփոփումն իրականացվում է դրա համար առանձնացված սենյակում, որի ընթացքում սենյակում կարող են ներկա գտնվել միայն Հաշվիչ հանձնաժողովի անդամները, դիտորդները և վստահված անձինք (յուրաքանչյուր թեկնածուի համար մեկ վստահված անձ), լրագրողները: Վստահված անձի փոխարեն կարող է ներկա գտնվել թեկնածուն: Ներկա գտնվող անձինք իրավասու են ձայնագրել և/կամ տեսանկարահանել նշված գործընթացը: Բացի Հաշվիչ հանձնաժողովի անդամներից, մյուս ներկաները իրավունք չունեն քվեատուփերին կամ քվեաթերթիկներին ձեռք տալ: Հաշվիչ հանձնաժողովի անդամները հաշվելու և Հաշվիչ հանձնաժողովի նախագահին են վերադարձնելու չօգտագործված քվեաթերթիկները: Հանձնաժողովը քվեարկության արդյունքների ամփոփմանը զուգահեռ, նախքան քվեատուփ բացելը, կազմում է արձանագրություն (թիվ 1), որում նշվում է՝ 1) չօգտագործված քվեաթերթիկների թիվը, անօգտագործելի դարձնելով չօգտագործված քվեաթերթիկները՝ անկյունը կտրելու միջոցով: 2) ժողովին մասնակցելու իրավունք ունեցողների ընդհանուր թիվը (ցուցակային թիվ): 3) ըստ ցուցակի ստորագրությունների քվեաթերթիկ ստացածների թիվը: Թիվ 1 արձանագրությունը կազմելուց հետո Հաշվիչ հանձնաժողովի նախագահը բացելու է համապատասխան քվեատուփը, քվեատուփից հանելու է մեկական քվեաթերթիկ, հայտարարելու է քվեարկության արդյունքը՝ փոխանցելով հաշվիչ հանձնաժողովի անդամներին՝ տեսակավորելու համար: Քվեաթերթիկները տեսակավորելուց հետո դրանք հաշվարկվելու են, իսկ արդյունքները՝ արձանագրվելու: Յուրաքանչյուր թեկնածուի անուն, ազգանունի դիմաց գրառվում են նրա օգտին տրված ձայները, իսկ այլ հարցով քվեարկության դեպքում՝ այդ հարցի օգտին տրված ձայները: Այս գործողությունը կրկնվելու է քվեատուփում առկա բոլոր քվեաթերթիկների համար: Քվեարկության ավարտից հետո՝ մինչև քվեարկության արդյունքների վերաբերյալ արձանագրություն կազմելը, Հաշվիչ հանձնաժողովի նիստը չի կարող ընդհատվել: Արձանագրությունը կազմվում է չորս օրինակից. մեկ օրինակը փակցվում է Փաստաբանների պալատում՝ տեսանելի տեղում, մեկ օրինակը տեղադրվում է ընտրական փաստաթղթերի պարկում, երկու օրինակը հանձնվում է Փաստաբանների պալատի արխիվ: Հաշվիչ հանձնաժողովում ներկա լինելու իրավունք ունեցող անձանց պահանջով նրանց տրվելու է քվեարկության արդյունքների արձանագրությունից քաղված ք՝ վավերացված հանձնաժողովի նախագահի և քարտուղարի ստորագրություններով և Հաշվիչ հանձնաժողովի կնիքով:

Հաշվիչ հանձնաժողովը կանոնադրությամբ սահմանված կարգով և ժամկետում ամփոփելու է ընտրությունների արդյունքները և ընդունում հետևյալ որոշումներից մեկը.

- 1) Փաստաբանների պալատի խորհրդի անդամների ընտրվելու մասին.
- 2) գործը նախապատրաստող անձանց ընտրվելու մասին.
- 3) «Փաստաբանի օր» սահմանելու մասին հարցով որոշման ընդունման մասին.
- 4) «Փաստաբանի օր» սահմանելու մասին հարցով քվեարկությունը

չկայացած ճանաչելու մասին:

Ընտրության արդյունքները կարող են դատարանի վճռով ճանաչվել անվավեր, եթե անճշտությունների չափը կամ ընտրությունների նախապատրաստման և անցկացման ընթացքում տեղի ունեցած էական խախտումներն ազդել են կամ կարող էին ազդել քվեարկության արդյունքների վրա:

```
Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })
```